ԱԶԴ

Մինչև ամսագրի իրաւունք ստանալը մեր բաժանորդներից շատերը նորոգել էին բաժանորդագրութիւնը հին հաշուով՝ ուղարկելով խմբագրութեանս 6-ական ռուբլի։ Հարկաւոր ենք համարում յիշեցնել այդպիսիներին, որ անմիջապէս լրացնելու են բաժնեգինը, **ՈՒՂԱՐԿԵԼՈՎ ՊՇԿԱՍՈՐԴ 2 ՌՈՒԲԼԻՆ։** Ոմանք արտասահմանից ուղարկել են մեզ 6 ռուբլի բաժնեգին, այդպիսիներին և առհասարակ արտասահմանից բաժանորդ դրուողներին միանգամ ընդ միշտ յայտնում ենք, որ «Լումայի» բաժանորդավճարն այնտեղ արժէ **27 ֆրանք։**

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը ոչ մի չը տպուելու յօդուած չի վերադարձնում. ցանկացողները յեռ ստանայ՝ կամ պէտք է ինքները դիմեն յեռ ստանալու եւ կամ ուղարկեն փոստի ծախքը։

2. Խմբագրութիւնը իրաւունք ունի հարկաւոր դէպքում փոփոխել կամ կրճատել տպագրուելի յօդուածները։

3. Խմբագրութեան ուղարկած յօդուածները պէտք է լինեն գրուած մաքուր, պարզ եւ մի երեսի վերայ. մանաւանդ պարզ պէտք է գրել յատուկ անուններն ու օտարազգի բառերը։

4. Խմբագրութիւնը իրաւունք ունի բոլոր յօդուածները ենթարկել իւր ուղղագրութեան։

5. Թարգմանական յօդուածների հետ միշտ պէտք է ուղարկել եւ բնագիրը, առանց որի ոչ մի թարգմանութիւն չի կարող տպուել։

6. Խմբագրութեան զանազան հարցերով դիմողները պարտաւոր են ուղարկել պատասխանի համար նամակադրոշմ։

7. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 50 կոպեկ դրամով կամ նամակադրոշմով։

8. «Լումայի» որեւէ համար չը ստանալու դէպքում պէտք է յայտնել խմբագրութեան առանձին նամակով մի ամսուայ ընթացքում, որպէս զի կարողանանք պաշտամաւոր դիմում անել փոստային վարչութեան։